ՄՇԿԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

ՅՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի մոտակայքում, խիտ անտառների խորքում կառուցված այս հուշարձանախումբը թե՛ իր գեղարվեստական արժանիքներով և թե՛ պատմա-ճարտարապետական նշանակությամբ միանգամայն ուրույն տեղ է գրավում մեր արվեստի պատմության մեջ։ Նրա կառուցման ժամանակը հայտնի չէ, սակայն ճարտարապետական ձևերի, դրվագների և կոնստրուկցիաների մանրամասն քննությունը թույլ է տալիս դասելու այն XIII դարում կառուցված հուշարձանների շարքը։

Հուշարձանախումբը կազմված է միանավ եկեղեցուց և խաչվող կամարներով ընդարձակ գավիթից։ Շրջապատում պահպանվել են վանքապատկան կառուցվածքների շատ մնացորդներ։

Եկեղեցին փոքր, միանավ շենք է, սակայն իր համաչափությունների և վերասլաց չափերի շնորհիվ ունի բավական ընդարձակ ներսի տարածություն։ Հատակագծում կիսակլոր աբսիդը եկեղեցու ներսի տարածությանն է միանում խոշոր կամարակապ բացվածքով։ Արևմտյան պատի մեջ արված դռնով եկեղեցին հաղորդակցվում է գավիթի հետ։ Թաղակապ առաստաղը զգալի բարձրություն ունի, որի հետևանքով տանիքի թեքությունները շատ մեծ են։ Հենց այդ թեքության պատճառով ծածկասալերը իրենց կիսակլոր ելուններով և քառորդներով իրար են ագուցված, մեկը մյուսի վրա են նստում, այսպիսով ստեղծելով մի ընդհանուր անջրանցիկ մակերևույթ։

Եկեղեցու հատակը, տեղանքի պատճառով, գավիթի հատակից զգալի բարձր է ստացվել։ Տեղադրված քարե աստիճանները հաղթահարում են այդ տարբերությունը։

Խաչվող կամարներով գավիթը հանդիսանում է այս համալիրի հիմնական կառուցվածքը և վաղուց ի վեր գրավել է հետազոտողների ուշադրությունը[1]։

Ըստ կոնստրուկտիվ սխեմայի Մշկավանքի գավիթը մոտենում է Հաղբատի և Դանձասարի գավիթներին։ Երեքն էլ հնարավոր է դիտել որպես մեկ ընտանիքի՝ խաչվող կամարներով գավիթների ներկայացուցիչներ, որոնց հատկանշական կողմերից է արևմտյան մասում երկու առանձին կանգնած սյուների առկայությունը։ Վերջին հանգամանքը, ստեղծելով լրացուցիչ ծավալ, ընդլայնում է ներսի տարածությունը։ Նշված երեք գավիթներն էլ լավ են դիմացել ժամանակի փորձություններին և կանգուն վիճակում հասել են մեզ։

Հաղբատի և Մշկավանքի գավիթների երդիկները կազմված են խաչվող

---

[1] *Տե՛ս, օրինակ,* С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952; Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961; А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества. Армянские монастыри XIII в. Хоракерт и Мшкаванк, «Советская археология», XIV, 1950.

կամարներից, որի շնորհիվ ընդգծվում է սլացիկությունը և գեղեցիկ ինտերիեր է ստեղծվում։

Մշկավանքի գավիթը ուղղանկյուն կառուցվածք է, մի փոքր ձգված արևմուտք-արևելք ուղղությամբ։ Ամբողջ ծածկը հենվում է երկու զույգ խաչվող կամարների վրա։ Կամարների հատումով ստացված քառակուսին դարձյալ ծածկված է երկու զույգ խաչվող կամարներով, որոնց հատումից առաջանում է երդիկը։ Շատ հավանական է, որ երդիկը հնում ծածկված լիներ սյունազարդ կառուցվածք ունեցող ռոտոնդայով, որի հետքերը չեն պահպանվել։

Խաչվող կամարներով կազմված ծածկի շնորհիվ ստեղծվել է նոր տիպի քառաթեք տանիք, որի չորս ճակատներում թեք լանջերը հենվում են հորիզոնական քիվերին։ Նման տանիք ստացվել էր նաև Հաղբատում և Գանձասարում։ «Այսպիսով խաչվող կամարներով ծածկերի կիրառումը հայ վարպետներին հնարավորություն տվեց ստեղծելու մի շարք նոր, մինչ այդ անհայտ կառուցվածքների տիպեր, ուր ներսի տարածությունը զարմացնում է իր ամբողջությամբ և միասնականությամբ, լի է լույսով և օդով ու հիացնում է համարձակ ու թեթև բարձրացող հուժկու կամարներով»[2]։

Գավիթի ճակատները լուծված են բավական զուսպ, ուշագրավ են նեղ ու ձգված պատուհանները, երեսակալված հուժկու գլանաձև գոտիով, որը անցնելով ամբողջ գավիթի պատի ստորին մասով, շենքի ցոկոլային մասը անջատում է վերևի մասերից։

Մի շարք կառուցվածքներում այդպիսի գոտին լինում էր հարթ (երբեմն՝ բանդակազարդ) և կիրառվում էր որպես շքամուտքերի կամ պատուհանների երեսակալ։ Վերջինս հատկանշական է XIII դարում կառուցված հուշարձանների համար և կարող է հանդիսանալ որոշ հուշարձանների կառուցման դարը որոշելու միջոցներից մեկը։

Գավիթի արևմտյան ճակատը շատ ուրույն ձևով է լուծված։ Հիմնականը եղել է ճոխ միջոցներով մշակված շքամուտքը։ Նրա ճակատակալ քարը ընդգրկվել է զույգ կամարներով, որոնք իրենց հերթին հենվել են զույգ կիսասյուների վրա, ստեղծելով մուտքի հիմնական հորինվածքը։ Լայն երեսակալը, ընդգրկելով ամբողջ մուտքը, ամփոփում է նաև նրա վրա բարձրացող պատուհանը, ողջ շքամուտքին հաղորդելով ընդհանուր ոճական միասնություն, որի հարազատությունը XIII դարի կառուցվածքներին անվիճելի է։

Շքամուտքի զույգ սյուների և երեսակալի միջև առաջացած հարթությունը ծածկված է եղել հարուստ մշակված, զույնզգույն տուֆերից կազմված հավաքովի օրնամենտով, որը շատ հաջող կերպով զարդարել է այն։ Գավիթի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյունները իրականացված են եղել վերից վար ձգվող գլանաձև գոտիով, որը շատ բնորոշ քանդակներ ունի։ Արևմտյան ճակատի վրա, շքամուտքի երկու կողմերում քանդակված են բազմաթիվ մեծ ու փոքր խաչեր, որոնք ընդհանուր ձևով զարդարելով պատը, հինավուրց կառուցվածքի ընույթ են հաղորդում նրան։

Չափագրման և հետազոտման ժամանակ (Շ. Ազատյան և Յու. Թամանյան, 1954 թ.) գավիթը գտնվում էր կիսավեր վիճակում։ Երդիկի մասը համարյա լրիվ քանդված էր, պահպանվել էին երկրորդ շարքի խաչվող կամարների հիմքի քարերը միայն և երեսապատերի ստորին երկու շարքը։ Արևելյան

---

2 С. Х. Мнацаканян, նշվ. աշխ., էջ 82։

հիմնական կամարի կենտրոնական հատվածը փլվել էր ու վտանգ առաջացրել ամբողջ կամարի և, հետևաբար, ամբողջ կառուցվածքի համար։ Հիմնական կամարների արանքներում պահպանված թաղերի մեծ մասը քանդվել էր, իր հետ տանելով տանիքի սալերը և խախտելով ամբողջ ծածկի համակարգը։ Տանիքի սալերից մի քանիսը կախված վիճակում պահպանվել էին քիվերի մնացորդների հետ միասին։ Մուտքի ճակատակալ քարը խարխլվել էր, ստանալով բազմաթիվ ճաքեր և պատրաստ էր ամեն րոպե փլվելու։

Նման պայմաններում էր գտնվում նաև եկեղեցին։ Թաղի երկու մասերը, գոտկող կամարի հետ միասին, քանդվել էին, իսկ մնացած քարերը խիստ խարխլված էին։ Քիվերի մեծ մասը տանիքի սալերի ստորին շարքերի հետ միասին թափվել էին ցած, և անձրևաջրերը, պատերի վրայով հոսելով, քայքայում էին դրանք։ Բացի այդ, տանիքների սալերի զգալի մասը տեղից խախտվել էր և չէր ծառայում իր նպատակին։

Հարավային և հյուսիսային կողմերում կից կառուցված ավանդատները նույնպես խիստ ավերված վիճակում էին։ Տանիքները, թաղերը և պատերի զգալի մասը քանդված էին։ Ողջ հուշարձանախումբը հիշեցնում էր անտառի մեջ մոռացված ավերակ։ Բարեբախտաբար քարերի զգալի մասը գտնվում էր տեղում, ծածկված հողի, փլատակների և բուսականության հաստ շերտով։

Վերականգնման նախագծի վրա աշխատելիս մենք համոզվեցինք, որ լրիվ հնարավոր է վերականգնել թե՛ գավիթի խարխլված խաչվող կամարները և թե՛ ծածկի համակարգը։ Համանման հուշարձանների կոնստրուկցիաների ուսումնասիրությունը թույլ տվեց դալ այն եզրակացության, որ լրիվ հնարավոր է վերականգնել խաչվող կամարների համակարգը՝ առանց դիմելու երկաթբետոնե լրացուցիչ հենակմախքի։ Այդ նույն կարծիքին էր նաև վերականգնող-ճարտարապետ Հրանտ Հակոբյանը (որը իրականացրեց նախագծի երկրորդ տարբերակը)։

Վերականգնման նախագիծ կազմելիս զգալի մտահոգություն էր պատճառում արևելյան հիմնական կամարը, որի կենտրոնական մասը լրիվ քանդվել էր։ Արևմուտք-արևելք ուղղությամբ աշխատող զույգ կամարներից առավել քայքայված էր հարավայինը։ Այդ կամարի հենարանից երկրորդ քարը այնպես էր ջարդված, որ չնչին դեֆորմացիաների դեպքում կարող էր կործանել ամբողջ կամարը, հետևաբար նաև ամբողջ հուշարձանը։

Հաշվի առնելով կամարների և ամբողջ ծածկի կոնստրուկցիաների տարածական աշխատանքը, հնարավոր եղավ նախատեսել առանձին տարրերի և քարերի փոփոխումը նույնիսկ ամենալարված հատվածներում։ Միայն ամբողջ ներվյուրային համակարգի վերականգնումից հետո կարելի էր վերականգնել թաղերը և ամբողջ տանիքը ծածկել քարե սալերով։

Կամարների վերականգնման և ամրացման աշխատանքները կատարելու համար նախատեսվում էին ներքին ծանր տախտակամածներ և կամարակալներ։

Մեծ բարդություն էր ներկայացնում արևմտյան շքամուտքի վրա պահպանված պատուհանի և նրան ընդգրկող երեսակալի փոխադարձ դասավորման հարցը։ Երեսակալը, ըստ համանմանության սկզբունքի, բարձրացվել էր և մոտեցվել պատուհանին, սակայն պարզվեց, որ պատուհանը տեղադրված է շատ ցածր, ուստի պատուհանի և շքամուտքի համար առանձին երեսակալ այդ տեղում չի կարող տեղադրվել, որի հետևանքով շքամուտքի երեսակալը

պետք է ընդգրկի նաև պատուհանը։ Նախագծի վրա այդպես էլ վերականգնվեց այդ մասը (նկ. 1, 2)։

Վերականգնման նախագիծ կազմելիս ճակատների վրա ամենայն ճշտությամբ որոշվել էին քիվերի և մյուս հանգուցային կետերի ուղղաձիգ նիշերը։ Պարզվեց, որ գավիթի հորիզոնական քիվը դեֆորմացիաներից մի փոքր թեքություն է ստացել, որի հետևանքով տանիքի սալերը տեղադրելիս լուրջ դժվարություններ կառաջանան։ Ուստի նշված թեքության մասնակի ուղղումը



Նկ. 1



Նկ. 2

կնպաստեր տանիքների սալերի ավելի լավ իրականացմանը։ Այդ կապակցությամբ թեքության մի մասը որոշվեց ուղղել պատի և քիվերի տեղադրումով, մյուսը՝ սալերի միջոցով, որը չպետք է անդրադառնար տանիքի սալերի ընդհանուր աշխատանքի վրա։

Հաղբատի վանքի գավիթի, հատկապես նրա երդիկի կառուցվածքի ուսումնասիրությունները, հուշեցին մեզ այդ մասի վերականգնման հնարավորությունները։ Սակայն երդիկի վրա կառուցված սյունազարդ ռոտոնդայի մասեր

գտնելու հետևանքով մի տարբերակում այդ հատվածը վերականգնվեց ոռոտոնդայով, մյուսում՝ առանց ոռոտոնդայի։

Կամարների և թաղերի ամրացումից հետո հնարավոր էր իրագործել քարե տանիքը։ Լանջերի թեքությունները որոշելու համար բավարար տվյալների բացակայության հետևանքով թեքությունները որոշվեցին կտրվածքների օգնությամբ, համապատասխան կառուցումների միջոցով։ Այդտեղ հաշվի առնվեցին թաղի և տանիքի սալերի հաստությունները և տանիքի թեքության օպտիմալ անկյունը։ Տանիքի և երդիկի հպման տեղում պահանջվում էր ունենալ ուղղաձիգ պատի մի հատված, որպեսզի տանիքները իրար շարունակություն չկազմեն։ Երդիկի ծածկի թեքությունների որոշման համար կատարվեցին նույնանման կառուցումներ։



Նկ. 3

Արևմտյան մասում թաղի և առաստաղի հորիզոնական հատվածների քանդվելու հետևանքով զգալի խոռոչներ էին առաջացել, որոնք անհրաժեշտ էր լցնել կրաբետոնի շաղախով։ Լիցքի ընդհանուր քաշը թեթևացնելու համար նախատեսվում էր շաղախի մեջ տեղադրել խոշոր կարասներ, իսկ որոշ տեղերում՝ պեմզայի քարաբեկորներ։

Շքամուտքի ճակատակալ քարի մանրամասն զննումը ցույց տվեց, որ այն այլևս պիտանի չէ օգտագործման համար, որովհետև փշրվել է։ Ճակատակալ քարը զուրկ էր որևէ արձանագրությունից և քանդակից, ուստի հնարավոր էր փոխարինել այն նորով, քանի որ բազմաթիվ բեկորներից հավաքված քարը, այդպիսի պատասխանատու տեղում, չէր կարող լավ աշխատել և նույնիսկ կարող էր պատճառ դառնալ հետագա փլուզումների համար։

Եկեղեցու վերականգնման նախագիծ կազմելիս հիմնական ուշադրությունը դարձվեց գոտկող կամարների վիճակին, որովհետև դրանց շաղախը

երկար տարիներ բաց լինելու հետևանքով լվացվել էր և կամարները կարող էին քանդվել։ Ամրացնելու նպատակով նախագծում ծրագրված էր կամարների երկու քարերը փոխարինել նորով և վնասված տեղերում շաղախ ներարկել։ Պահպանված հին սալերի նմուշները հիմք ծառայեցին տանիքի սալերի բնաչափ գծագիրը կազմելու համար։ Նախատեսվում էր վերաշարել տանիքի պահպանված սալերը[3], որովհետև նման տիպի ծածկը հարկավոր է իրականացնել քիվի վրա նստող սալերի տեղադրումով։ Դա պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր հաջորդ սալը իր քառորդով նստում է ներքևի սալի վրա, որով ապահովվում է ծածկի ընդհանուր կայունությունը։



Նկ. 4

Վերականգնման նախագիծը նախատեսում էր կից խորանների վերականգնումը, ուր պահպանվել էին թաղերի հիմքերը և պատերի ու քիվերի մնացորդները, որոնք հնարավորություն էին տալիս լրիվ վերարտադրելու այն։ Նշված տվյալների հիման վրա կազմված վերականգնման նախագիծը վերանորոգման աշխատանքների պրոցեսում շարունակում էր լրացվել և ամբողջանալ։

Վերականգնման աշխատանքները սկսվել էին 1955 թ. և շարունակվեցին մինչև 1960 թ.։ Հուշարձանի մաքրման աշխատանքներից հետո բոլոր պիտանի քարերը առանձնացվեցին և դասավորվեցին կառուցվածքի մոտ գտնվող հարթակի վրա։ Հիմնական դժվարությունը լուծվում էր գավիթի ներվյուրային համակարգի կրողունակության վերականգնումով։ Առաջին հերթին վերականգնվեց գավիթի արևելյան կամարի կենտրոնական հատվածը, ապա՝ մյուս կամարների տարբեր հատվածները։ Մինչ աշխատանքները սկսելը թվում էր, թե այդ կարգի վերականգնումները համարյա անհնարին են, սակայն վարպետների և հատկապես ճարտարապետ-վերականգնողի ջանքերով այն իրականացվեց և գավիթի կոնստրուկտիվ մասի վերականգնումով լուծվեց նրա քարով ծածկելու հնարավորության հարցը։ Այդ աշխատանքները կատարելուց հետո վերականգնվեցին թաղերը և կարելի եղավ վերականգնել խաչվող կամարների երկրորդ համակարգը երդիկի հետ միասին (նկ. 3, 4)։

Արևմտյան ճակատի լուծման որոնումները հանգեցրին շքամուտքի և

3 Նկ. 2-ում այդ քանդված ու վերաշարված մասերը ցույց են տրված թեք շտրիխներով, իսկ նոր քարերով երեսպատումը՝ ուղղաձիգ շտրիխներով։

նրա վրա տեղադրված պատուհանի վերակառուցմանը երկրորդ տարբերակի համաձայն, ըստ որի երեսակալը ընդգրկում է նաև պատուհանը։

Արևմտյան հատվածի ծածկի իրականացման ժամանակ խոշոր կարասների տեղադրման միջոցով ցգալի թեթևացվեց կրաբետոնի ծավալը։ Օգտագործելով հին վարպետների փորձը (Զվարթնոց), կարասների և կուժերի հետ զուգընթաց տեղադրվեցին պեմզայի բեկորներ։

Շրջապատի մաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել էին կլոր ելուններով ծածկասալերի բեկորներ, սակայն դրանց քառորդները այնպես էին հանված, որ սալերը չէին դալիս մեկը մյուսի վրա։ Ելնելով երկարամյա փորձից, իրականացվեց ծածկի այնպիսի տարբերակը, երբ ծածկասալերը իրենց քառորդներով նստում են մեկը մյուսի վրա, դրանով իսկ ապահովելով ջրի ավելի հաջող հոսքը։ Բացի դրանից, նման ծածկը բոլոր տվյալներով ստացվում էր ավելի երկարակյաց։

Եկեղեցու վերանորոգումը հիմնականում ընթացավ ճակատների երեսապատերի, քիվերի, թաղերի, գոտկող կամարների և տանիքների վերականգնման ուղղությամբ։

Ճակատների վերականգնման համար, ուր պարզապես պակասում էին երեսապատերի քարերը, չլուծված հարցեր չէին մնում։ Հյուսիսային ճակատի մեծ մասը զուրկ էր երեսապատերի քարերից, որոնց վերականգնումը կատարվեց ըստ շաղախի վրա պահպանված քարերից տպված հետքերի։

Քիվի վերականգնման ժամանակ, ծածկասալերի հենման նպատակով ամբողջ երկայնքով տաշվում էր հատուկ ատամնավոր ելուստ, որի դերը շատ մեծ է հատկապես նշված տիպի սալերի համար։ Հնում մի շարք հուշարձաններում այդ ատամից բացի օգտագործվում էին նաև մետաղական պահանգներ (Արուճի տաճար)։

Փայտե կամարակալները հնարավոր դարձրին գոտկող կամարների վերականգնումը և ապա՝ ծածկի նորոգումը։

Եկեղեցու քիվերին հենվող սալերը (թե՛ հարավային և թե՛ հյուսիսային ճակատներում) ջարդվել էին. նոր սալեր տեղադրելու համար պետք էր վերաշարել ամբողջ տանիքը, չնայած սալերի մի մասը համեմատաբար լավ վիճակում էր և կարող էր այդպես երկար մնալ։

Ծածկասալերի համար օգտագործվեց Դովեղ գյուղի մոտակայքում գտնվող քարհանքի կանաչավուն ֆելզիտը, որը մի շարք փորձարկումներից հետո ցուցաբերեց առավել լավ հատկանիշներ (փորձերի արդյունքները պահվում են Պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության արխիվում)։

РЕСТАВРАЦИЯ МШКАВАНКА

Ю. А. ТАМАНЯН

(Резюме)

Статья посвящена вопросам реставрации и восстановления монастыря Мшкаванк (Ноемберянский р-н АрмССР). В ней показаны этапы исследования и реставрации памятника — от его археологического обмера (выполненного в 1954 г. нами совместно с арх. Ш. Р. Азатяном) до завершения работ в 1960 г.